ԵՄ-ՀՀ հարաբերություններ

ՁԵՌՆԱՐԿ

«ՀՀ-ում արդարադատության համակարգի հզորացում՝ ԵՄ իրավունքի ուսումնասիրության միջոցով» նախագծի շրջանակներում

Ծրագիրը ֆինանսավորվում է
Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության կողմից

Ծրագիրը իրականացվում է
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից

ԵՄ համառոտ պատմություն

Ածխի և պողպատի եվրոպական միավորումը, որը հետագայում ԵՄ-ի ստեղծման հիմք հանդիսացավ, հիմնադրվել է 1950 թվականին: Եվրոպական միությունը ստեղծվել է 1992 թվականին: Ստեղծման օրվանից սկսած ԵՄ-ն բազում ձեռքբերումներ է ունեցել: Այն ստեղծել է ապրանքների և ծառայությունների միասնական շուկա, ունի միասնական արժույթ՝ եվրոն, որը միասնական շուկան ավելի արդյունավետ է դարձնում: ԵՄ-ն ամենախոշոր ծրագրեր է իրականացրել կրթական, մարդասիրական և բժշկական ոլորտներում:

Եվրոպական միության հիմքում ընկած են 28 անդամ պետությունները և դրանց քաղաքացիները: ԵՄ յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն իր մեջ համախմբում է 28 ինքնիշխան, անկախ պետությունների: Վերջիններս միավորել են իրենց «ինքնիշխանության» մի մասը քանակական առումով ուժ և առավելություններ ունենալու նպատակով: Գործնականում միավորել ինքնիշխանությունը նշանակում է, որ անդամ պետությունները իրենց ներկայացուցիչներին են ուղարկում իրենց իսկ կողմից ստեղծված ԵՄ կառույցներ, որպեսզի միասնական հետաքրքրություն ունեցող որոշումները կայացվեն ժողովրդավարական եղանակով՝ եվրոպական մակարդակում:

ԵՄ-ն իրականացնում է ընդհանուր արտաքին քաղաքականություն, որն ուղղված է աշխարհում եվրոպական արժեքների տարածմանը: Այս սկզբունքային ծրագրերի իրականացումը կախված է արդյունավետ որոշումների կայացման և դրանց իմպլեմենտացման հետ:

ԵՄ նպատակներից մեկը ընդլայնումն է, որի համար համագործակցություն է իրականացվում հարևան պետությունների հետ՝ պատրաստելով վերջիններիս ԵՄ անդամակցությանը:

Որոշումների ընդունման կարգը, յուրաքանչյուր պետության ունեցած ձայների քանակը և դրա բաշխվածությունը
ՀՀ-ԵՄ հարաբերություններ

ԵՄ-ն երրորդ պետությունների հետ համագործակցություն է իրականացնում՝ նպաստելով նրանց հզորացմանը ու համագործակցության շրջանակի խորացմանը: Ցանկացած եվրոպական երկիր կարող է անդամակցել Եվրոպական միությանը, եթե համապատասխանում է վերջինիս ժողովրդավարական, քաղաքական և տնտեսական չափանիշերին: Բանակցությունների ընթացքում թեկնածու երկրները, որպես կանոն,

ստանում են «անդամակցության համագործակցության» օժանդակություն՝ տնտեսապես առաջադիմելու համար: Նրանք նաև սովորաբար ունեն «կայունացման և ասոցացման համաձայնագրեր» ԵՄ-ի հետ: Այս համաձայնագրերի ներքո ԵՄ-ն ուղղակիորեն մոնիթորինգ է անցկացնում այն տնտեսական և վարչական բարեփոխումների վերաբերյալ, որոնք երկրները պետք է իրականացնեն՝ ԵՄ անդամակցության պայմաններին համապատասխանելու համար:

ԵՄ-ՀՀ հարաբերությունների պատմությունը

1. 1999թ. գործընկերության և համագործակցության համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունները կարգավորվում են 1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության և եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված և 1999թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագրով (այսուհետ՝ ԳՀՀ[1]): Այն կնքվել է 10 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո այն երկարաձգվում է յուրաքանչյուր անգամ մեկ տարով (ինքնաբերաբար երկարաձգվում է): ԳՀՀ-ն համարվում է ներկայիս միակ իրավական հիմքը ՀՀ և ԵՄ հարաբերություններում: Դրա համակողմանի իրագործումը պայմանավորված է փոխադարձ շահերով և կնպաստի ՀՀ-ում քաղաքական, տնտեսական և իրավական բարեփոխումների գործընթացին և ավարտին: ԳՀՀ-ն ընդգրկում է համագործակցության բոլոր ոլորտները՝ բացի ՀՀ անվտանգության երաշխիքների տրամադրումից: Այն կարգավորում է տնտեսական, արդյունաբերական, գիտատեխնիկական, կրթական, սոցիալական, շրջակա միջավայրի, տրասպորտի, ֆինանսական ծառայությունների, մաքսային ծառայությունների, զբոսաշրջիկության ոլորտներում համագործակցությունը: ***Համագործակցություն է նախատեսվում նաև ժողովրդավարության և մարդու իրավունքներին առնչվող հարցերի շուրջ***: Համաձայնագրի շրջանակներում նախատեսվում է նաև օրենսդրական համագործակցություն, որի արդյունքում ՀՀ օրենսդրությունը համապատասխան ոլորտներում պետք է համապատասխանի ԵՄ չափանիշերին և իրավական կարգավորումներին:

Կառույցներ

[1] Հասանելի է http://www.mfa.am/hy/country-by-country/eu/ կայքէջում:

- ՀՀ-ԵՄ համագործակցության խորհուրդ (համանախագահ՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյան)
- ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտե (ՀՀ Կառավարության N 128 որոշում, 20 մարտի, 2000թ.)՝ կազմված ԵՄ և Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ ԵՀՔ) երկրների ներկայացուցիչներից
- ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով համագործակցության ենթակոմիտե
- Արդարադատության, ազատությունների և անվտանգության հարցերի ենթակոմիտե
- Էներգետիկայի, միջուկային անվտանգության, բնապահպանության և տրանսպորտի հարցերի ենթակոմիտե
- Զբաղվածության և սոցիալական հարցերի, առողջապահության, վերապատրաստման և կրթության, տեղեկատվական հասարակության և աուդիովիզուալ քաղաքականության, գիտության և տեխնոլոգիաների, մշակույթի, երիտասարդության հարցերի ենթակոմիտե

ԳՀՀ նպատակները

ՀՀ-ԵՄ ԳՀՀ-ն առաջին հոդվածում սահմանում է համաձայնագրի նպատակները, որոնք հետևյալն են՝

- ապահովել համապատասխան հենք կողմերի միջև քաղաքական երկխոսության համար՝ նպատակ ունենալով զարգացնել քաղաքական կապերը.
- աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ երկրում ժողովրդավարությունն ամրապնդելու, տնտեսությունը զարգացնելու և շուկայական տնտեսությանը անցումը ավարտելու համար.
- նպաստել կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին և այդպիսով խթանել դրանց կայուն տնտեսական զարգացումը.
- հիմք ստեղծել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար:

ԳՀՀ նպատակներից է նաև կանոնավոր քաղաքական երկխոսության ծավալումը: Քաղաքական կապերի զարգացման միջոցով կողմերը պարտավորվում են ապահովել միմյանց միջև քաղաքական երկխոսություն, որը՝

- կամրապնդի Հայաստանի Հանրապետության կապերը Համագործակցության և դրա անդամ պետությունների և, հետևաբար, ժողովրդավարական ազգերի ողջ հանրության հետ: Սույն համաձայնագրի միջոցով ձեռք բերված տնտեսական մերձեցումը կտանի դեպի ավելի սերտ քաղաքական կապերի հաստատում.
- կնպաստի Հարավային Կովկասի անկախ պետությունների հետագա զարգացմանն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջազգային հարցերում դիրքորոշումների համընկմանը և, դրանով իսկ, այդ տարածաշրջանում անվտանգության ու կայունության աճին.
- կնախատեսի, որ կողմերը ջանքեր գործադրեն՝ համագործակցելու Եվրոպայում կայունության և անվտանգության ամրապնդման, ժողովրդավարության սկզբունքների իրագործման, մարդու, մասնավորապես փոքրամասնությունների իրավունքների հարգման և պաշտպանության վերաբերյալ հարցերում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցեն առնչվող հարցերի շուրջ:

2. *2006թ. «Եվրոպական հարևանության քաղաքականության» ծրագիր*

Իր Եվրոպական հարևանության քաղաքականություն ծրագրով ԵՄ-ն աշխատում է իր հարավային և արևելյան հարևանների հետ հնարավորինս մոտ քաղաքական ասոցացման և տնտեսական ինտեգրման ամենաբարձր աստիճանին հասնելու համար: Այս նպատակը կառուցվում է այնպիսի ընդհանուր շահերի և արժեքների վրա, ինչպիսիք են ***ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, հարգանքը մարդու իրավունքների նկատմամբ և սոցիալական համախմբվածությունը***[2]: Հայաստանը ԵՄ Հարևանության քաղաքականության շրջանակներում ընդգրկվել է 2004թ. հունիսին: 2006թ. նոյեմբերին ԵՄ հետ ստորագրվել է Եվրոպական հարևանության քաղաքականության Գործողությունների ծրագիրը՝ հինգ տարի ժամկետով: Գործողությունների ծրագիրը սահմանում է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ընդգրկված և դրանից դուրս գոյություն ունեցող առաջնայնությունների համապարփակ շրջանակ: Այդ

[2] Հասանելի է՝ http://eeas.europa.eu/enp/ կայքէջում:

առաջնայնություններից, որոնք բոլորը կարևոր են, առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու հետևյալ ոլորտներին և հատուկ գործողություններին[3].

- ժողովրդավարական կառույցների, օրենքի գերակայության ամրապնդում, ներառյալ դատաիրավական համակարգի բարեփոխումներ և խարդախության ու կոռուպցիայի դեմ պայքար.
- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում՝ Հայաստանի միջազգային պարտավորություններին համապատասխան (ԳՀՀ, ԵԽ, ԵԱՀԿ, ՄԱԿ).
- հետագա տնտեսական զարգացման խթանում, ջանքերի ավելացում աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում՝ այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը.
- ներդրումային քաղաքականության հետագա բարելավում և մասնավոր հատվածի շարունակական աճի ամրապնդում.
- տնտեսական օրենսդրության և վարչարարության հետագա համապատասխանեցում.
- էներգետիկ ռազմավարության մշակում, ներառյալ Մեծամորի ատոմակայանի հնարավորինս շուտ փակում.
- նպաստում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը.
- տարածաշրջանային համագործակցության բնագավառում ջանքերի ավելացում:

Ընդհանուր նպատակներ ու գործողություններ.

- քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ.
- նպաստում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը.
- տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, աղքատության նվազեցում և կայուն զարգացում.
- առևտրին առնչվող հարցեր, շուկայական և կարգավորող դաշտի բարեփոխումներ.
- արդարադատության, ազատության և անվտանգության բնագավառում համագործակցություն.
- համագործակցություն հատուկ բնագավառներում, ներառյալ տրանսպորտը, էներգետիկան և բնապահպանությունը:

[3] Հասանելի է՝ http://ec.europa.eu/world/enp/pdf/action_plans/armenia_enp_ap_final_en.pdf կայքէջում

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանը Եվրոպական միության կողմից 2007 - 2010թթ. միջև ընկած ժամանակահատվածում ստացել է 98 միլիոն եվրո օգնություն, իսկ 2011 – 2013թթ. միջև ընկած ժամանակահատվածում՝ 157 միլիոն:

3. 2009թ. Արևելյան գործընկերության ծրագիր

Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱԳ) ծրագիրը Եվրոպական միության նախաձեռնությունն է՝ ուղղված դեպի Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի վեց երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Բելոռուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա: Ծրագրի պաշտոնական մեկնարկը տրվեց 2009թ. մայիսի 7-ին Պրահայում կայացած ԵՄ անդամ 27 պետությունների և 6 գործընկեր երկրների գագաթաժողովում: Նախաձեռնության նպատակն է ԱԳ երկրների և ԵՄ անդամ երկրների հարաբերությունների ամրապնդումը՝ քաղաքական համագործակցության և տնտեսական ինտեգրման խորացման միջոցով: Դրա հիմքում ընկած է ընդհանուր հավատարմությունը միջազգային իրավունքին և հիմնարար արժեքներին, ներառյալ ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգումը, ինչպես նաև հավատարմությունը շուկայական տնտեսությանը, կայուն զարգացմանն ու լավ կառավարմանը: ԱԳ-ին մասնակցելն ամենևին չի ենթադրում ԵՄ-ին անդամակցության հեռանկարներ կամ չի բացառում դրա հնարավորությունը: Այն առաջարկում է ավելի խորը ինտեգրում ԵՄ կառույցներում՝ խրախուսելով և աջակցելով ԵՄ չափանիշերի հիման վրա քաղաքական, ինստիտուցիոնալ և տնտեսական բարեփոխումների իրականացումը, ինչպես նաև նպաստում է ԵՄ և գործընկեր պետությունների միջև առևտրին և մեծացնում շարժունակությանը: Արևելյան գործընկերությունը գործում է 2 ձևաչափերով՝ երկկողմ և բազմակողմ: ԱԳ շրջանակներում ԵՄ երկկողմանի համագործակցության հիմնական նպատակը գործընկեր երկրների հետ երկկողմ հարաբերությունների ամրապնդումն է: ԱԳ նպատակներից է նաև ԵՄ-ի և ԱԳ տարածաշրջանի ու գործընկեր երկրների միջև բազմակողմ համագործակցությանը նպաստելը: Հայաստանը ակտիվորեն ներգրավված է ԱԳ թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ ձևաչափերում:

ԱԳ կազմակերպչական կառուցվածքը

Արևելյան գործընկերության բազմակողմ ձևաչափը գործում է մի քանի մակարդակներում:

Ամենաբարձր մակարդակը ներկայացված է պետությունների ղեկավարների գագաթաժողովի և անդամ պետությունների ու գործընկեր երկրների կառավարությունների տեսքով:

Մյուս մակարդակում արտաքին գործերի նախարարների և ժամանակ առ ժամանակ՝ մյուս նախարարների հանդիպումներն են: Առանձին ոլորտներում աշխատող բարձրաստիճան պաշտոնատար անձանց բազմակողմ թեմատիկ հարթակները ԱԳ գոտում մշակում են տարածաշրջանային համագործակցության աջակցման մեթոդներ և գործարկում առանձին բազմակողմ նախագծեր:

Պաշտոնատար անձանց աշխատանքը դիտարկման է ենթարկվում, իսկ այդ դիտարկումների արդյունքների մասին հաղորդում է ԱԳ Քաղաքացիական հասարակության ֆորումը, որի հիմնական նպատակն է ԵՄ և գործընկեր երկրների քաղաքացիական հասարակությունների միջև կապերի զարգացումը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության մասնակցության առաջընթացի ապահովումը երկրի հասարակական կյանքում:

Իր հաստատումից հետո Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովը[4] ևս վերահսկելու է ԱԳ մարիններին և ստանձնելու է Եվրախորհրդարանի և գործընկեր երկրների խորհրդարանների ներկայացուցիչների միջև երկխոսության անցկացման համար նախատեսված ֆորումի դերը:

Այն երրորդ երկրները, որոնք ցանկություն են հայտնում աջակցելու Արևելյան գործընկերությանը, կարող են միանալ Արևելյան գործընկերության ընկերների ոչ ֆորմալ խմբին և ժամանակավոր սկզբունքով կարող են մասնակցել առանձին ծրագրերին[5]:

Արևելյան գործընկերության նպատակները

[4] Եվրանեսթի խորհրդարանական խորհրդարանն Եվրոպական խորհրդարանի և գործընկեր երկրների խորհրդարանների ներկայացուցիչներից (60 ներկայացուցիչ ԵՄ խորհրդարանից, 60 ներկայացուցիչ գործընկեր երկրների խորհրդարաններից) կազմված ասամբլեա է: Միասին նրանք պետք է ժողովրդավարական վերահսկողություն իրականացնեն ԱԳ իմպլեմենտացման համար: Եվրանեսթը պետք է ապահովի երկխոսության ֆորում Եվրոպական խորհրդարանի և գործընկեր երկրների միջև:

[5] Հասանելի է՝ http://www.easternpartnership.org/eap-institutions/general կայքէջում

Արևելյան գործընկերության հիմնական նպատակն է ստեղծել պայմաններ՝ խթանելու քաղաքական զուգորդումը և տնտեսական ինտեգրման խորացումը ԵՄ-ի և Արևելյան Եվրոպայի գործընկեր երկրների հետ: Արևելյան գործընկերության Վարշավայի գագաթաժողովն ընդունեց եվրոպական ձգտումները և որոշ գործընկերների եվրոպական ընտրությունն ու նրանց հանձնառությունը՝ կառուցելու խոր և կայուն ժողովրդավարություն: Ընդգծված է Արևելյան գործընկերության մասնավոր դերը՝աջակցելու այն երկրներին, որոնք Եվրամիության հետ էլ ավելի մոտ հարաբերությունների են ձգտում:

Արևելյան գործընկերությունը նաև նպատակ է հետապնդում խթանելու տարածաշրջանային համագործակցությունն ու բարիդրացիական հարաբերությունները: Սրա նպատակն է աջակցել ընդհանուր հավատարմությանը կայունությանը, անվտանգությանը, ինչպես նաև և՛ ԵՄ, և՛ գործընկեր երկրների բարգավաճմանը: Ի օժանդակություն նշված համընդգրկուն նպատակների՝ ԵՄ-ն և իր Արևելյան Եվրոպայի գործընկերները պետք է՝

- ստեղծեն նոր, առավել խոր պայմանագրային դաշտ ԵՄ և գործընկեր երկրների միջև ասոցացման համաձայնագրերի տեսքով, ներառյալ, ըստ անհրաժեշտության, Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտին, որտեղ կարգավորող մերձեցումը կարող է որպես գործիք ծառայել՝ ամրապնդելու համար առևտրի և ներդրումների ազատականացման դրական ազդեցությունը, որը կհանգեցնի համապատասխանեցմանը ԵՄ օրենքներին և չափորոշիչներին:
- Աջակցեն քաղաքացիների շարժունակությանը և մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացմանը լավ կառավարվող և ապահով միջավայրում: Գործընկեր երկրների քաղաքացիների տեղաշարժը պետք է խթանվի մուտքի և ելքի արտոնագրերի տրամադրման դյուրացման համաձայնագրերի միջոցով՝ որպես վերջնական նպատակ հանդիսացող ազատ վիզային ռեժիմի առաջին քայլ:
- Ընդլայնեն համագործակցության ոլորտը և նպաստեն ԵՄ ծրագրերում և մարմիններում գործընկեր երկրների մասնակցությանը:

Երկկողմ ձևաչափի նպատակները

- քաղաքական հարաբերությունների ինտենսիվացում և տնտեսական ինտեգրում.

Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները

Մինչև 2013թ. աշունը Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները Հայաստանի հետ պետք է զգալիորեն ընդլայնվեն, եթե ոչ վերջնական ավարտի հասցվեն: Հայաստանի Հանրապետության հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի (այսուհետ՝ ԽՀԱԱՀ) շուրջ բանակցությունները պետք է զգալի առաջընթաց գրանցեն, եթե ոչ վերջնական ավարտի հասցվեն: Միաժամանակ, շարունակական առաջընթաց պետք է արձանագրել հարաբերությունների ինտենսիվացումը կանոնակարգող ոլորտում՝ համաձայն Հանձնաժողովի առաջարկությունների:

Աջակցելու համար Ասոցացման համաձայնագրի նախապատրաստական և իրագործման գործընթացներին, ներառյալ, անհրաժեշտության դեպքում՝ ԽՀԱԱՀ համաձայնագրին, ԵՄ-ն և Հայաստանի Հանրապետությունը պետք է համաձայնություն տան 2013թ. ասոցացման համապատասխան օրակարգին:

Բանակցային գործընթացի ողջ շրջանում ԵՄ-ն պետք է գործընկերներին քաղաքական երկխոսություն և ֆինանսական օժանդակություն տրամադրի: Քաղաքական բարեփոխումների շուրջ գրանցված առաջընթացը, որը անհրաժեշտ է Արևելյան գործընկերության ընդհանուր արժեքների և գործընկեր երկրների նկատմամբ ԵՄ-ի ընդհանրական դիրքորոշումն իրագործման համար, ազդեցություն կունենա այն զարգացման արագության վրա, որոնցով գործընկերները ի վիճակի կլինեն օգուտ քաղել ԵՄ-ի հետ առավել մոտ հարաբերություններից:

ԵՄ-ն ակնկալում է արժանահավատ և կայուն ջանքեր տեսնել Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության առավելագույնս վաղ կարգավորման ուղղությամբ: ԵՄ-ն նաև լիարժեք կերպով աջակցում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին, որոնցում ԵՄ-ն մասնակցություն չի ցուցաբերում: ԵՄ-ն վերահաստատում է իր աջակցությունը Մադրիդյան սկզբունքներին և կոչ է անում Հայաստանին և Ադրբեջանին ավելի մեծ ջանքեր գործադրել՝ այդ սկզբունքների շուրջ համաձայնության գալու՝ իբրև հիմք խաղաղության համար: ԵՄ-ն խորացնում է իր համագործակցությունը հակամարտության կողմ հանդիսացող գործընկեր երկրների հետ և ուժեղացնում է իր օժանդակությունը վստահության կառուցման գործում: ԵՄ-ի հետ գործընկեր երկրների քաղաքական զուգորդման և տնտեսական ինտեգրման

գործընթացում առաջընթացը կխթանի տարածաշրջանում հակամարտությունների կարգավորմանն ուղղված ջանքերը ու կայունությունը:

Նախատեսվում է ավարտին հասցնել մուտքի և ելքի արտոնագրերի տրամադրման դյուրացման համաձայնագրի շուրջ Հայաստանի հետ վարվող բանակցությունները: Մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացման և հայրենադարձության համաձայնագրերի արդյունավետ կիրարկումը և լայն իմաստով համագործակցությունն արդարադատության և ներքին գործերի ոլորտներում կարող են հանգեցնել վիզայի ռեժիմի վերացմանը Հայաստանի հետ Գործողությունների ծրագրի շուրջ բանակցությունների շրջանակում:

- քաղաքացիների ընդլայնված շարժունակություն անվտանգ և լավ կառավարվող միջավայրում.

<u>Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները</u>

Նախատեսվում է ավարտին հասցնել մուտքի և ելքի արտոնագրերի տրամադրման դյուրացման համաձայնագրի շուրջ Հայաստանի հետ վարվող բանակցությունները: Մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացման և հայրենադարձության համաձայնագրերի արդյունավետ կիրարկումը և լայն իմաստով համագործակցությունն արդարադատության և ներքին գործերի ոլորտներում կարող են հանգեցնել վիզայի ռեժիմի վերացման Հայաստանի հետ Գործողությունների ծրագրի շուրջ բանակցությունների շրջանակում:

- ամրապնդված ոլորտային համագործակցություն.

<u>Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները</u>

ԵՄ-ն կդյուրացնի գործընկեր երկրների մասնակցությունը ԵՄ մարմինների և ծրագրերի աշխատանքներում:

Էներգետիկայի ոլորտում համագործակցության ամրապնդման նպատակով կխթանվի բաց և ընդգրկուն քաղաքականությունը էներգետիկայի անվտանգության, փոխադրումների և մատակարարման ոլորտներում: Հայաստանը պետք է հետագայում բարելավի իր ատոմակայանի անվտանգությունը և պետք է ավարտի “stress test”-երի իրականացումը:

Տրանսպորտի ոլորտի բարեփոխումները պետք է համապատասխանեցվեն ԵՄ տրանսպորտային չափանիշերին: Օդային ծառայությունների համաձայնագրերի

շուրջ բանակցությունները պետք է ավարտին հասցվեն մի շարք երկրների հետ, մինչդեռ այլ բանակցությունները կարող են շարունակվել կամ նախատեսվել, ինչին պետք է հետևի իրագործման փուլը: Հայաստանը պետք է կարողանա ապահովել ճանապարհային անվտանգության բարելավված ցուցանիշներ: Նպատակը պետք է լինի Հայաստանի՝ Տրանս-եվրոպական տրանսպորտային ցանցին միացումը:

Անվտանգության ոլորտում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը պետք է գործնականում կիրառվի՝ համապատասխան միջազգային կոնվենցիաների, ինչպես նաև սահմանների միասնական կառավարման համաձայն, որ իրականացվում է լավագույն փորձի և միջազգային համաձայնագրերի հիման վրա: Համեմատական առաջընթաց պետք է գրանցվի կազմակերպված հանցավորության և ֆինանսական հանցագործությունների, այդ թվում՝ ահաբեկչական ֆինանսավորման դեմ պայքարի, ապօրինի դեղամիջոցների առևտրի և կոռուպցիայի, ինչպես նաև տվյալների պաշտպանության ոլորտում՝ բազմակողմանի իրավակիրառական միջոցներով ապահովված արդյունավետ օրենսդրության սահմանմամբ:

Բազմակողմ համագործակցության ոլոլտներ

- Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն.

<u>Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները</u>

Սերտ աշխատելով Եվրոպայի խորհրդի (CoE) հետ՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող ԱԳ-ի միջոցով ժողովրդավարության, լավ կառավարման և կայունության հարթակներին առնչվող խմբերը պետք է նպաստեն ազատ և արդար ընտրություններին, դատական ոլորտի բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես նաև կիբերհանցավորության կանխմանն առնչվող եվրոպական չափանիշերին համապատասխանեցման գործընթացի բարելավմանը: Պետք է քայլեր ձեռնարկվեն օմբուդսմենի ինստիտուտի ամրապնդման ուղղությամբ:

- էներգետիկ անվտանգություն.

<u>Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները</u>

Այս ոլորտում աշխատանքը պետք է կենտրոնացվի մրցակցային էներգետիկ շուկաների՝ ԵՄ շուկաներ ինտեգրվելու ուղղությամբ համագործակցության վրա: Դա

պետք է իրականացվի էներգետիկայի ոլորտում բարեփոխումների (քաղաքականություն, օրենսդրության կիրարկում և կարգավորում) միջոցով: Պետք է շարունակվեն էներգատարերի դիվերսիֆիկացիային նպաստող ջանքերը: Էական ջանքեր պետք է գործադրվեն էներգետիկայի արդյունավետության ու վերականգնվող տեսակների օգտագործման խթանման նպատակով: Այս բոլոր ոլորտներում տարածաշրջանային էլեկտրականության շուկաները, էներգետիկ արդյունավետության և վերականգնվող էներգիայի գլխավոր ֆոնդերը INOGATE ծրագրի միջոցով պետք է նպաստեն հիմնական նպատակների իրականացմանը:

Որպես միջազգային պայմանագրերին և կոնվենցիաներին համապատասխանող ավելի ուժեղ միջուկային անվտանգության մշակույթի խթանմանն ու միասնական իրավականորեն պարտադիր կարգավորող ձևաչափի ձևավորմանն ուղղված ջանքերի մաս՝ ակնկալվում է, որ շահագրգիռ գործընկեր երկրները պետք է 2012թ.-ին ավարտեն իրենց «stress test»-երը:

- Մարդկանց միջև շփումներ.

<u>Մինչև 2013 թ. աշունն ակնկալվող ձեռքբերումները</u>

Մարդկանց միջև շփումներն ակտիվացնելուն ուղղված համագործակցությունը պետք է հանգեցնի գործընկեր երկրների մասնակցության աճին ԵՄ միջազգային բարձրագույն կրթության համագործակցային ծրագրերում: Բարձրագույն կրթական համակարգերի համապատասխանեցումը, դպրոցական համագործակցության և համատեղ ուսուցման խթանումը ևս պետք է ընդլայնվի: Գործընկեր երկրները պետք է օգուտ քաղեն ԵՄ երիտասարդությունը շարժման մեջ ծրագրում մասնակցության աճից (Արևելյան գործընկերության լայն պատուհանի բացման միջոցով[6]):

Արևելյան գործընկերության երրորդ գագաթնաժողովը տեղի է ունենալու 2013թ. նոյեմբերի 28-ից 29-ը Վիլնյուսում: Միջոցառմանը ներկա կլինեն ԵՄ կառույցների գերագույն ներկայացուցիչները, 28 անդամ պետությունները և ԱԳ 6 գործընկերները: Միջոցառումը կկազմակերպվի Լիտվայի Հանրապետության նախագահ Դալիա Գրիբաուսկայտեի, Եվրոպական խորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպուի և Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարրոզոյի կողմից: Գագաթաժողովի ընթացքում ամփոփվելու են Արևելյան գործընկերության

[6] Համատեղ հաղորդագրություն Եվրոպական խորհրդարանին, խորհրդին, Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովին և ռեգիոնալ հանձնաժողովին/Արևելյան գործընկերություն. ճանապարհային քարտեզ՝ 2013 թ. գագաթաժողովին ընդառաջ, Բրյուսել, 15.05.2012-թ.:

ծրագրում ներգրավված վեց երկրների[7] կողմից բարեփոխումների իրականացման գործընթացում արձանագրած առաջընթացը և հնարավոր է համարվում դրանցից մի քանիսի հետ ասոցացման համաձայնագրերի ստորագրումը:

4. Ասոցացման համաձայնագիր

Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ բանակցությունները ՀՀ-ի հետ մեկնարկել են 2010 թվականի հուլիսի 19-ին: Արևելյան գործընկերության շրջանակներում ՀՀ-ին առաջարկվել է կնքել Ասոցացման համաձայնագիր: Այն պարագայում, երբ Ասոցացման համաձայնագրի շրջանակներում կողմերը երկկողմանի համաձայնության կգան բոլոր դրույթների վերաբերյալ, ապա Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը կփոխարինվի Ասոցացման համաձայնագրով, որը ներկայումս բանակցային փուլում է: Ասոցացման համաձայնագրի հիմքում ընկած են ընդհանուր սկզբունքներ, որոնք ՀՀ և ԵՄ միջև ասոցացման հիմք են հանդիսանալու: Այդ ընդհանուր սկզբունքներն են՝

- հարգանք ժողովրդավարական սկզբունքների, մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրենքի գերակայության նկատմամբ.
- հարգանք ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և անկախության սկզբունքների նկատմամբ, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածմանն ուղղված հակազդեցություն.

Ասոցացման համաձայնագիրը բաղկացած է 4 մասից: Դրանք են՝

- քաղաքական երկխոսություն, արտաքին քաղաքականություն և անվտանգության քաղաքականություն.
- ազատություն, արդարադատություն և անվտանգություն.
- տնտեսական և ոլորտային համագործակցություն.
- չորրորդ մասի՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու բանակցությունները առանձին են տարվում:

Ասոցացման համաձայնագրի նախագծման և բանակցությունների իրականացման համար ՀՀ նախագահի կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի համար պատասխանատու բանակցային թիմ և երեք ոլորտային աշխատանքային խմբեր՝

- քաղաքական երկխոսության և անվտանգության քաղաքականության հարցերով աշխատանքային խումբ.

[7] Հայաստան, Ադրբեջան, Բելոռուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա:

- ազատության, արդարադատության և անվտանգության հարցերով աշխատանքային խումբ.
- տնտեսական, ֆինանսական ոլորտներում համագործակցության հարցերով աշխատանքային խումբ:

ՀՀ կողմից բանակցությունների համակարգողն է արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Խորը և համապարփակ ազատ գոտու շուրջ բանակցային գործընթաց

ՀՀ-ԵՄ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու շուրջ բանակցությունների նախապատրաստական և մեկնարկի նպատակով Եվրոպական հանձնաժողովը 2009թ. հունիսին Հայաստան կատարած փաստահավաք առաքելության այցի արդյունքների հիման վրա հրապարակեց Գնահատման զեկույցը: Զեկույցը նախատեսում էր հայկական կողմից իրականացման ենթակա աշխատանքների երկու խումբ՝ գլխավոր առաջնայնություններ (key priorities) և լրացուցիչ առաջարկություններ (additional recommendations): ԽՀԱԱԳ բանակցությունները սկսելու համար նախապայման էր հանդիսանում Հայաստանի կողմից առևտրի տեխնիկական խոչընդոտների, սանիտարական և բուսասանիտարական միջոցների, մտավոր սեփականության իրավունքների և ընդհանուր համակարգման ոլորտներում գլխավոր առաջնայնությունների կատարումը: Նախապայմանները իրականացնելու և ԽՀԱԱԳ բանակցությունները սկսելու նպատակով մշակվեց և ՀՀ վարչապետի կողմից հաստատվեց բանակցությունների մեկնարկի ապահովման միջոցառումների ժամանակացույցը, որը նախատեսում էր նախանշված միջոցառումների իրականացում մինչև 2011թ. վերջը (ՀՀ վարչապետի 2011թ. օգոստոսի 10-ի թիվ 763-Ա որոշում): Իրականացված աշխատանքները ամփոփվեցին 2012թ. հունվար ամսին, ինչի հիման վրա համապարփակ տեղեկատվություն պարունակող զեկույց ներկայացվեց Եվրոպական հանձնաժողովի քննարկմանը:

2012թ. փետրվարի 17-ին կայացած նիստում ԵՄ առևտրային քաղաքականության հանձնաժողովը որոշում կայացրեց Հայաստանի հետ ԽՀԱԱԳ շուրջ բանակցությունների մեկնարկի վերաբերյալ[8]:

Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի նպատակն է առավել թափանցիկ դարձնել պետությունների միջև առևտրային սահմանները, ինչը ենթադրում է, որ Հայաստանի սպառողները իրավունք կունենան մտնել ԵՄ շուկա:

[8] Հասանելի է http://www.mineconomy.am/arm/43/gortsaruyt.html կայքէջում:

Այն ենթադրում է նաև առևտրային պայմանների բարելավում Հայաստանի և վերջինիս արտադրողների համար: